



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 7 » մայիսի 2020 թվականի N: 131-Ա ք.Գյումրի

«ՄԱՐԱԼԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ
ՎՈՒԱՄ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 6.2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Անուշ Հովսեփյանի և Վուսա Մելիքյանի 2020 թվականի մայիսի 6-ի դիմումները և «Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2020 թվականի մայիսի 6-ի N:153/20 տեղեկանքը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար Անուշ Հովսեփյանի անաշխատունակության մեջ գտնվելու կապակցությամբ 2020 թվականի մայիսի 7-ից «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն ընկերության ստոմատոլոգ Վուսա Մելիքյանին՝ մինչև տնօրենի պաշտոնակատարի աշխատանքի վերադառնալը:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

